4-430

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 15 » 01 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 002 - 24

Ձեռնարկողը՝ ***«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ***
Երևան, Խանջյան փ. 19

Գործունեությունը՝ ***Ալավերդու նախկին Լենհանքերի արտադրական լցակույտերում առկա օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 002 - 24

<15> 01 2024թ.

Լոռու մարզի Ալավերդու նախկին Լենհանքերի արտադրական լցակույտերում առկա օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝	«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ, Ծրագիր,
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ, Ալավերդի համայնք, բն. Ալավերդի

Ներածական մաս. Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական սահմաններում գտնվող նախկին Լենհանքերի արտադրական լցակույտերում՝ որպես ընդերքի տեղամասում, «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2023-2026թթ. ընթացքում նախատեսում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարում՝ առկա օգտակար հանածոների պաշարների գնահատման համար:

Հանքավայրի սահմանը հյուսիսից սահմանազատվում է Մադանի ֆերմայով, արևելքում՝ Մադան գյուղի արևելյան մասով (Լենհանքեր), հարավում՝ Ալավերդու պղնձաձուլական գործարանով, իսկ արևմուտքում՝ Դարկ լեռան գագաթից 500մ արևելք: Ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական սահմաններում՝ հյուսիսային լայնության 41°07′30.40″ և արևելյան երկայնության 44°38′50.13″ կոորդինատներում: Այն ընդգրկելու են շուրջ 15 հա ընդհանուր մակերեսով՝ նախկին Լենհանքերի արտադրական լցակույտերով ծածկված աշխարհագրական տարածքը, որն ամբողջությամբ ձևավորվել է նույն Լենհանքերում նախկինում ստորգետնյա եղանակով իրականացված օգտակար հանածոների արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոնները երկրի մակերևույթի վրա տեղադրվելու արդյունքում: Ապարներում հանդիպում են՝ պիրիտ միներալը (FeS_2)՝ մանրահատիկ ցանի տեսքով, խալկոպիրիտ ($CuFeS_2$) միներալը՝ մանրահատիկ նոսր ցանի և հազվադեպ աննշան կուտակումների տեսքով: Աննշան քանակներով և հազվադեպ հանդիպում են գալենիտ (PbS) և սֆալերիտ (ZnS) միներալները, որոնք դիտարկվում են միայն խոշորացույցով: Ալավերդու նախկին Լենհանքերի արտադրական լցակույտերի տեղաբաշխման և ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքի ծայրակետային կոորդինատներն են.

Հ/Հ	CK-42 համակարգ		ARM-WGS 84 համակարգ	
	X	Y	X	Y
1.	4554200	8470200	4554193	8470098
2.	4555200	8470200	4555193	8470098
3.	4555200	8471060	4555193	8470958
4.	4554800	8471060	4554793	8470958

5.	4554800	8471000	4554793	8470898
6.	4554600	8471000	4554593	8470898
7.	4554600	8470600	4554593	8470498
8.	4554200	8470600	4554193	8470498

Դիտարկվող տարածքի լանդշաֆտը տիպիկ լեռնային է՝ խիստ կտրտված ռելիեֆով: Տեղամասի հողերը համայնքային սեփականության են, որոնց նպատակային նշանակությունը գյուղատնտեսական են (այլ հողատեսքեր) և ներկայումս հանդիսանում են օգտակար հանածոյի հանքաքարի արդյունահանման արդյունքում ձևավորված նախկին արտադրական լցակույտեր՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներ: Տարածքում բուսականությունը տեղ-տեղ ներկայացված է մոլախոտային տարատեսակներով: Համաձայն Հայտում ներկայացված տեղեկատվության՝ երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում բացակայում են՝ վտանգված էկոհամակարգերը, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, բնության հուշարձանները և անտառային ռեսուրսները, հետևաբար աշխատանքների իրականացման դեպքում կբացառվի հիշյալ տարածքների վրա բացասական ազդեցությունները:

Նկարագրական մաս. Արտադրական լցակույտերի ուսումնասիրության մեթոդիկայի ու միջոցների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով դրանց երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, տեղանքի ռելիեֆը և այլ գործոններ: Ելնելով լցակույտերի տարածքների չափերից, դրանցում լցված ապարների շերտայնությունից, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախատեսված են իրականացնել մեխանիկական սյունակային հորատման և հանուկի նմուշարկման միջոցով: Առաջին՝ նախապատրաստական փուլում ծրագրա-նախահաշվային փաստաթղթերի պատրաստման նպատակով դիտարկվող տեղամասում նախատեսվում է նախկինում կատարված աշխատանքների վերաբերյալ ֆոնդային նյութերի վերաբերյալ տեղեկատվության ձեռք բերում: Հիմնական փուլում՝ արտադրական լցակույտերի տարածքում իրականացվելու է 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթի իրականացում՝ ընդհանուր 15 հա մակերեսի վրա: Լցակույտերի խորքում ուսումնասիրելու նպատակով նախատեսված է հորատման աշխատանքների իրականացում՝ արտադրական 59 հորատանցքի հորատման միջոցով /10-30 մ խորությամբ, 990 մետր ընդհանուր ծավալով/: Հորատումը նախատեսված է իրականացնել կարծր համաձուլվածքային և ալմաստային 93մմ տրամագծով թագագլխիկներով՝ կանադական արտադրության Cristensen P-6 հորատման կայանքով:

Ուսումնասիրության աշխատանքները ներառում են նաև հետախուզական հորատանցքերի տոպոգրաֆիական չափագրում, հորատահանուկի լուսանկարում և փաստագրում, որից հետո կատարվելու է հանուկային նմուշների վերցնում, դրանց պիտակավորում և փաթեթավորում: Տոպոգրաֆիական հանույթի վրա կնշվեն հորատանցքերի տեղերը: Հորատանցքերը համատարած կենթարկվեն միջինը 1.5մ երկարությամբ հանուկային նմուշարկման: Ընդամենը նախատեսվում է վերցնել 660 հատ հանուկային նմուշ՝ դրանցում պղնձի և ազնիվ մետաղների պարունակությունները որոշելու համար քիմիական և հարգորոշիչ անալիզներ իրականացնելու նպատակով:

Ուսումնասիրության աշխատանքների ամփոփիչ փուլում նախատեսվում է իրականացնել ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ: Ճառագայթահիգիենիկ իրավիճակի գնահատման համար հանուկը կենթարկվի ռադիոմետրական չափումների: Աշխատանքների ավարտից և ստացված արդյունքներն ամփոփելուց հետո կազմվելու է պաշարների հաշվարկմամբ երկրաբանական հաշվետվություն:

Երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսված տարածքում ստորգետնյա և մակերևութային ջրային հոսքեր առկա չեն, հորատման հրապարակների ամենամոտ հեռավորությունը Լալվար գետից կազմում է ավելի քան 100 մ: Հորատման տեխնոլոգիական գործընթացն իրականացվելու է հորատման լուծույթի փակ շրջանառու համակարգով՝ բացառելու նպատակով տեխնոլոգիական կորուստները, ինչպես նաև մակերևութային ու ստորգետնյա ջրերի վրա հնարավոր ազդեցությունները: Հորատման լուծույթի պատրաստման համար օգտագործվելու է պոլիակրիլամիդ և բենտոնիտային կավ, ինչն ամրացնելով հորատանցքի պատերը՝ թույլ չի տալիս տեխնոլոգիական լուծույթի կորուստ և ստորգետնյա ջրերի աղտոտում: Տեխնոլոգիական նպատակով ջուրը նախատեսվում է բերել Ալավերդի քաղաքից՝ հատուկ նախատեսված մեքենա-ներով: Աշխատողների համար հորատման հրապարակներում նախատեսված է մոդուլային տիպի հանդերձարաններ և շարժական սանիտարական զուգարաններ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման համար նոր մուտքային ճանապարհների կառուցում նախատեսված չէ, վերականգնվելու են նախկինում գոյություն ունեցած ավտոճանապարհները: Փաստացի տարածքն ամբողջովին խախտված է, զուրկ հողի վերին շերտից և վերջինիս հանման և պահպանման անհրաժեշտություն չի ենթադրվում: Հորատման հրապարակները ևս հանդիսանում են նախկինում օգտակար հանածոների արդյունահանման հետևանքով խախտված տարածքներ: Ծրագրով նախատեսված է հորատման աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքները բերել իրենց նախկին տեսքին՝ օգտագործելով հորատման հրապարակներում առկա դատարկ ապարները:

Աշխատանքների իրականացման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցություն կարող է առաջանալ ճանապարհների վերականգնման, տեխնիկայի տեղաշարժի ժամանակ և հորատման մեքենաների շարժիչների աշխատանքի ընթացքում և ուղեկցվել՝ փոշու, ազոտի, ծծմբի և ածխածնի օքսիդների արտանետումներով:

Գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցման միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում: Միջոցառումներց կարևորվել են.

- փոշու արտանետումների նվազեցման նպատակով տարածքի ջրցանումը,
- հորատման տեխնիկան միջոցների և փոխադրամիջոցների պարբերաբար ստուգումը, դրանց տեխնիկական վիճակի կարգաբերումը,
- հորատման աշխատանքների իրականացում ժամանակակից հորատման հաստոցներով՝ լվացող հեղուկի փակ շրջանառու համակարգով,
- հորատման աշխատանքների ավարտից հետո հորատման հրապարակներում դատարկ ապարներով տարածքների վերականգնում,
- կենցաղային թափոնների պատշաճ հեռացումը համապատասխան աղբամաններում:

Ընկերության կողմից ծրագրավորված աշխատանքների իրականացման ընթացքում կանխատեսվող թափոնների առաջացման և դրանց կառավարման համար նախատեսվել են միջոցառումներ և ծախսեր, ինչը գնահատվել է 449600 ՀՀ դրամ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ողջ ժամանակահատվածի համար Ընկերության կողմից մշակվել է բնապահպանական կառավարման և մոնիթորինգի ծրագիր: Շրջակա միջավայրի կառավարման և մոնիթորինգի ծախսերը գնահատվել է 22330 հազ. ՀՀ դրամ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ փորձաքննական գործընթացն սկսելու պահին գործող խմբագրության /այսուհետ՝ Օրենք/ 37-րդ հոդվածի 1-ին մասի «Մինչև սույն

օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված փորձաքննության գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են փորձաքննության գործընթացն սկսվելու պահին գործող իրավական ակտերով»: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է Օրենքի վերը նշված պահանջներով:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայտի վերաբերյալ անցկացվել են հանրային քննարկումներ Ալավերդի համայնքի Ալավերդի բնակավայրում: Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Լոռու մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ԿԳՄՍ նախարարությունները, կադաստրի կոմիտեն, որոնց կողմից ներկայացված կարծիքները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում և փորձաքննության գործընթացում: Օրենքով սահմանված Փորձաքննական գործընթացին ներգրավվել և մասնակցել է նաև փորձագետը, որի կողմից ներկայացված մասնագիտական կարծիքը/եզրակացությունը ևս հաշվի են առնվել փորձաքննական եզրակացության նախագիծը կազմելիս:

Փորձաքննական հիմնավորումներ: Փորձաքննական գործընթացում պարզվել է, որ նախատեսվող գործունեության իրականացման համար բացակայում են ընդերօգտագործման թափոնների օբյեկտում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու վերաբերյալ իրավական հիմքերը և կարգավորումները, որոնցով պետք է առաջնորդվեր Ընկերությունը: Նշված հանգամանքի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով փորձաքննության գործընթացում Հայտը մի քանի անգամ շրջակա միջավայրի նախարարության գրություններով վերադարձվել է Ընկերությանը լրամշակման, սակայն Ընկերության կողմից պատասխան պարզաբանումները ներկայացվել են ոչ լիարժեք և չհիմնավորված, քանի որ.

1. Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 6)-րդ կետի՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունն իրավունք է տալիս **ընդերքի որոշակի տեղամասում** իրականացնելու երկրաբանական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոների հայտնաբերման, հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար: Նշված դրույթում արտադրական լցակույտի կամ թափոնի մասին որևէ հիշատակում չկա, մինչդեռ՝ Հայտում ներկայացված, Ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախատեսվում է իրականացնել արտադրական լցակույտերում (որտեղ տեղադրված են ընդերքօգտագործման թափոնները) այլ ոչ թե ընդերքի տեղամասում:

2. Ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 13)-րդ, 35)-րդ և 38)-րդ կետերով սահմանված՝ արտադրական լցակույտերի տարածքում և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում տեղադրվող ընդերքօգտագործման թափոնների կամ թափոնների գործածության մասին ընթացակարգերը սահմանվում և կարգավորվում են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի՝ 5.1 («Ընդերքօգտագործման թափոնների կառավարումը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակումը: Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանները») գլխով և «Թափոնների մասին» ՀՀ օրենքով):

3.«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվող գործունեության իրականացման իրավական հիմնավորումների պարզաբանման նպատակով հարցում է կատարվել ՏԿԵ նախարարություն՝ ինչին ի պատասխան հարցի կարգավորման համար հղում է արվել Ընդերքի մասին օրենսգրքի՝ 60.2 հոդվածի 2-րդ մասը և 5-րդ գլուխը, որոնք չեն վերաբերում երկրաբանական ուսումնասիրությանը:

4. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված՝ գնահատման և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների ցանկում բացակայում է ընդերքօգտագործման թափոնների օբյեկտում երկրաբանական ուսումնասիրությունը (որպես փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեություն):

Ընկերության կողմից նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը չի բխում Օրենքի և վերոնշյալ այլ իրավական ակտերի պահանջներից: Գործունեության իրականացման հիմքերի վերաբերյալ փորձաքննական գործընթացում Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվությունը ոչ լիարժեք է և չհիմնավորված:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական և օրենսդրական հիմնավորումները և առաջնորդվելով Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի Լոռու մարզի Ալավերդու նախկին Լենինքերի արտադրական լցակույտերում առկա օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան